ՀՈՒՆՎԱՐ - ՀՈՒՆԻՍ 2021
JANUARY - JUNE

ՏԵՂԵԿԱԳԻՐ
NEWSLETTER

Հայկական Կարմիր խաչի ընկերություն
Armenian Red Cross Society
Պարոնյան 21/1 Paronyan
Հայաստան, Երևան, 0015, Yerevan, Armenia

www.redcross.am
redcross@redcross.am

Ճապոնիայի կառավարությունն աջակցում է Իջևան քաղաքի աղբահանության համակարգի զարգացմանը

Հունվարի 26-ին, Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) կենտրոնական գրասենյակում ՀՀ-ում Ճապոնիայի Արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. պրն. Ջուն Յամադան և ՀԿԽԸ նախագահ Մխիթար Մնացականյանը ստորագրեցին «Փոխենք մտածելակերպը, մաքրենք քաղաքը» ծրագիրը, ըստ որի կբարելավվի Տավուշի մարզի Իջևան քաղաքի աղբահանության համակարգը: Ստորագրման արարողությանը ներկա էին նաև Իջևանի քաղաքապետը, ՀՀ Տարածքայինկառավարման և ենթակառուցվածների նախարարության և Տավուշի մարզպետարանի ներկայացուցիչներ:

Ճապոնիայի կառավարության աջակցությամբ՝ Հայկական Կարմիր խաչի ընկերությունը Իջևանում կտեղադրի 240 աղբաման և քաղաքապետարանին կտրամադրի համապատասխան աղբահավաք մեքենա: Իջևանի քաղաքապետարանը կապահովի աղբի հավաքման գործընթացի հետագա տեխնիկական սպասարկումը:

Համայնքների դիմակայունության բարձրացմանը և զարգացմանն ուղղված նմանատիպ ծրագրերը մեծապես փոխում են մարդկանց կյանքի որակը՝ էապես փոխելով նրանց մտածելակերպը: Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իր ծրագրերն իրականացնելիս նպատակ է դնում մտածողություն և վարքագիծ փոխել՝ արմատավորելով մարդասիրական արժեքները, և այս մեկն էլ այդ առումով բացառություն չէ - ասաց ՀԿԽԸ նախագահ Մխիթար Մնացականյանը:
- Ճապոնիայի կառավարության հետ հաջող համագործակցության փորձ ունենք, այնպես որ վստահ եմ այս ծրագրի արդյունավետության մեջ:

Իրիերթին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Ջուն Յամադան ընդգծեց, որ ենթակառուցվածքի բարելավումը, թափոնների պատշաճ կառավարման փորձը և շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացումը կնպաստեն Հայաստանի կայուն զարգացման նպատակների իրագործմանը: Դեսպան Յամադան նաև շեշտեց, որ այս օժանդակությունը կդառնա ոչ միայն քայլ ուղղված Հայաստանի շրջակա միջավայրի անվտանգության բարելավմանը, այլև կդառնա ամուր կապ և բարեկամության մարմնացում, ինչպես նաև փոխադարձ համակրանք, որը ավանդաբար ձևավորում է Ճապոնիայի և Հայաստանի հարաբերությունների հիմքը:

The Japanese government is supporting the development of garbage collection system in Ijevan

On 26 January, at the Armenian Red Cross Society (ARCS) Headquarters, Ambassador Extraordinary and Plenipotentiary of Japan to the Republic of Armenia, H.E. Mr. Jun Yamada and ARCS President Mkhitar Mnatsakanyan signed the " Cleaning City – Changing Minds" program, in the frames of which the waste management system of Ijevan city of Tavush region will be improved.

Mayor of Ijevan City, representatives of the RA Ministry of Territorial Administration and Infrastructure, and Tavush Regional administration attended the event as well.

With the support of the Japan Government, Armenian Red Cross Society will place 240 trash bins in Ijevan and provide one trash-collecting car to City Municipality, which will ensure further technical service of garbage collection.
“This kind of programs aimed at increasing the resilience and development of communities greatly change the quality of life of people, significantly changing their way of thinking. The Armenian Red Cross Society, while implementing its programs, aims to change minds and behavior, cultivating humanitarian values, and this particular one is no exception in this regard, - Dr, Mkhitar Mnatsakanyan, ARCS President said. “We have an experience of successful cooperation with the Government of Japan, so I am confident in the effectiveness of this program as well”.

Ambassador Yamada, in his turn, highlighted that the improved infrastructure, proper waste management practices and increased awareness of environmental protection will lead towards sustainable development path for Armenia. Ambassador Yamada also stressed that this assistance will not only become a step towards improvement of environmental security of Armenia but also will become a strong bond and embodiment of friendship and mutual sympathy which traditionally form the very foundation of Japan – Armenia relations.

2020 թվականին Իջևանի քաղաքապետարանը դիմել էր ՀԿԽԸ-ին՝ աղբի կառավարման բարելավմանն աջակցելու համար: Համայնքի դիմակայունության բարձրացմանն ուղղված «Փոխենք մտածելակերպը, մաքրենք քաղաքը» ծրագրի միջոցով աղբի հավաքման համակարգի կատարելագործումը կնպաստի բնապահպանական իրավիճակի բարելավմանը և աղետների ռիսկի նվազեցմանը:

90-ականներին Իջևանով անցնող Աղստև գետի ջրերը աղտոտվում էին Դիլիջանի «Իմպուլս» գործարանի և Իջևանի Գորգերի գործարանի թափոններով: Այժմ գետը աղտոտող արդյունաբերական ձեռնարկություններ չկան, սակայն անհրաժեշտություն կա բարելավել աղբահանության գործընթացը, որպեսզի կենցաղային թափոնները չաղտոտեն ու չխցանեն գետը՝ ստեղծելով ջրհեղեղի ռիսկ:

Իրանի Կարմիր մահիկը մարդասիրական օգնություն է տրամադրել Հայկական Կարմիր խաչի ընկերությանը՝ Ղարաբաղյան հակամարտության սրացման հետևանքով տեղահանվածներին աջակցելու համար

Մայիսի 12-ին Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) կենտրոնական գրասենյակ էր այցելել ՀՀ-ում Իրանի Իսլամա-կան Հանրապետության փոխդեսպան պարոն Ալի Մոհամադ Մոթաղին, որին ընդունեց ՀԿԽԸ գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը:
Իրանի Կարմիր մահիկը մարդասիրական օգնություն է տրամադրել Հայկական Կարմիր խաչի ընկերությանը՝ Ղարաբաղյան հակամարտության սրացման հետևանքով տեղահանված անձանց աջակցելու նպատակով: Օգնությունը ներառում է 1600 ծածկոց, խոհանոցային պարագաների 400 հավաքածու և մոտ 15000 միավոր բժշկական պարագա, որոնք փոխանցվեցին Այրվածքաբանության ազգային կենտրոնին:
Մենք շնորհակալ ենք գործընկեր Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությանը՝ համագործակցության և Ազգային ընկերությանը՝ ցուցաբերած աջակցության համար: Իրանի Կարմիր մահիկի հետ մեր համագործակցությունը երկար տարիների պատմություն ունի, և վստահ եմ, որ ապա-գայում էլ կհամագործակցենք՝ ի շահ խոցելի խմբերի բարօրության, - ողջունելով հյուրերին ասաց տիկին Աննա Եղիազարյանը:

Հայաստանի Հանրապետությունում ԻԻՀ փոխդեսպան պարոն Մոթաղին հիշատակելով Իրան-Հայաստան բարեկամական հարաբերությունների մասին, այդ թվում՝ կողմերի համագործակցությունը ծանր իրավիճակներում, որին բախվել են երկու երկրները, իր կարեկցանքը հայտնեց Ղարաբաղյան հակամարտության վերջին սրացման ընթացքում տուժածներին և, բարձր գնահատելով Հայկական Կարմիր խաչի ընկերության ջանքերը՝ պատերազմի հետևանքով մոտ հարյուր հազար տեղահանվածներին աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ, հաջողություն մաղթեց՝ սրացման հետևանքով տուժածներին օգնելու, ինչպես նաև մարդասիրական այլ խնդիրներ լուծելու համար:

Անդրադառնալով անցյալ տարվա ծանր պայմաններում երկու երկրների համագործակցության շարունակությանը՝ փոխդեսպանը հույս հայտնեց, որ Իրանի Իսլամական Հանրապետութ-յան Կարմիր մահիկի և Հայկական Կարմիր խաչի ընկերության միջև բարեկամական համագործակցությունն էլ ավելի կընդլայնվի:

In 2020, Ijevan city municipality has approached ARCS to assist in the improvement of waste management. Garbage collection process development, through the “Cleaning City – Changing Minds” program implementation, directed to community resilience raising, will promote environment conditions improvement and disaster risk reduction.

In the 90s the waters of the Aghstev River passing through Ijevan were polluted by the Dilijan Impulse Plant and Ijevan carpet-weaving plant. Now there are no industrial enterprises polluting the river, but there is a need of system change, which will prevent the river to be contaminated and clogged by household waste, creating risks of flooding.

Iranian Red Crescent provides humanitarian aid to Armenian Red Cross Society to help people displaced as a result of Nagorno Karabakh conflict escalation

On May 12 Deputy Ambassador of the Islamic Republic of Iran to the Republic of Armenia Mr Ali Mohammad Mottaghi visited the headquarters of the Armenian Red Cross Society (ARCS) and was received by ARCS Secretary General Anna Yeghia-zaryan.
The Iranian Red Crescent provided humanitarian aid to the Armenian Red Cross Society to help the people displaced as a result of Nagorno Karabakh conflict escalation. The aid in-cludes 1600 blankets, 400 sets of kitchen utensils and around 15 000 medical items handed to the National Burn Center.
“We thank our partner of the Government of the Islamic Republic of Iran for cooperation and the National Society for the support. Our cooperation with the Iranian Red Crescent has a long history, and I am sure that we will continue to cooperate in the future for the benefit of the vulnerable groups," said Mrs. Yeghiazaryan in her welcoming speech.

Speaking about the Iranian-Armenian friendly ties, including the cooperation between the two countries in difficult situations, Mr. Mottaghi expressed his sympathy to the people affected as a result of the recent escalation of the the Nagorno Karabakh conflict and praised the efforts of the Armenian Red Cross Society in supporting over one hundred thousand people displaced as a result of the war. He wished success in the efforts of helping the affected people and other humanitarian initiatives.

Referring to the continuation of cooperation between the two countries in the difficult circumstances of the past year, the Deputy Ambassador expressed hope that the friendly cooperation between the Red Crescent Society of the Islamic Republic of Iran and the Armenian Red Cross Society will further expand.

Ավարտվեց «ԵՄ-ն՝ հանուն երիտասարդության. աշխատունակության խթանում»

Գեղարքունիքի և Տավուշի մարզերում բնակվող 4300 երիտասարդ է մասնակցել Եվրամիության կողմից ֆինանսավորվող և Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից 2018-2021 թվականներին իրականացված «ԵՄ-ն՝ հանուն երիտասարդության. աշխատունակության խթանում» ծրագրի շրջանակներում կազմակերպված միջոցառումներին, 60 երիտասարդ աջակցություն է ստացել իր բիզնես գաղափարն իրագործելու համար, ներգրավվել է 133 կամավոր և 70 կազմակերպություն, ստեղծվել է 4 երիտասարդական ակումբ:

Մարտի 30-ին Մարիոթ Արմենիա հյուրանոցում տեղի ունեցավ ծրագրի փակման արարողությունը, որտեղ կազմակերպիչները, երիտասարդները և համայնքների ներկայացուցիչները միասին ամփոփեցին 3 տարվա ձեռքբերումները:

Ծրագրի նպատակն էր մարզերի սահմանափակ հնարավորություններ ունեցող երիտասարդների համար պայմաններ ստեղծել՝ աշխատաշուկայում մրցունակ դառնալու համար:

Այդ նպատակով առաջին փուլում 2018թ. իրականացվեց աշխատաշուկայի և երիտասարդների կարիքների գնահատման հետազոտություն, որի հիման վրա էլ հստակեցվեցին կրթական-տեղեկատվական աջակցության ուղղությունները:

- Մենք վստահ կարող ենք ասել, որ փոփոխություն ենք մտցրել այս երիտասարդների կյանքում, - ասաց ՀԿԽԸ Երիտասար-դական, կամավորության և անդամակցության բաժնի վարիչ Կատարինա Վարդանյանը, որը համակարգել էր ծրագիրն այս երեք տարիների ընթացքում, - մեր երիտասարդական ակումբ-ները կշարունակեն գործել՝ Դիլիջանի, Իջևանի, Գավառի և Սևանի երիտասարդների համար մնալով նոր գաղափարներ քննարկելու և իրականացնելու կենտրոններ: Շնորհակալ ենք մեր բոլոր գործընկերներին՝ այս տարիների ընթացքում մեզ աջակցելու և մեր երիտասարդներին ոգևորելու համար:

Ակումբների անդամների հետ աշխատել են մենթորներ՝ նորարարական մեթոդների կիրառմամբ, «Մասնագիտական կողմնորոշում և կարիերա» թեմայով կազմակերպված առցանց դասընթացներին մասնակցել է 684 մարդ, իսկ դիտումների թիվը՝ մոտ 20 000: Խթանելով ձեռներեցությունը» թեմայով կազմակերպվել է 2 ճամբար՝ 60 մասնակցի համար, ինչպես նաև Բիզնես գաղափարների «Հեքքթոն»:

- Եթե այս ծրագիրը չլիներ, ես հնարավորություն չէի ունենա ստանալու այս գիտելիքները և աշխատանք ունենալու, - նշեց Իջևանի երիտասարդական ակումբի ղեկավար Սարմենը:

- Ես երազանք ունեի՝ երիտասարդ ակումբ ունենալ և մոտիվացնել երիտասարդներին, Կարմիր խաչի շնորհիվ իրականացավ իմ երազանքը, - ասում է Սևանի ակումբը ղեկավարող Անահիտը:

Ամփոփմանը ներկա էին նաև նշված համայնքների և գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնք իրենց ելույթներում բարձր գնահատեցին ծրագրի արդյունավետությունը համայքների երիտասարդների համար, քանի որ նրանց ստացած գիտելիքներն ու հմտությունները բազմազան ու բազմաբնույթ էին, իսկ երիտասարդների ներգրավվածությունը համայնքների կյանքում զգալիորեն ավելացել է:

"EU 4Youth: fostering employability" closed

4300 young people living in Gegharkunik and Tavush regions participated in the EU-funded "EU 4Youth: fostering employability" program activities carried out by the Armenian Red Cross Society in 2018-2021. 60 young people received support to realize their business ideas, 133 volunteers and 70 organizations were involved, 4 youth clubs were established.

The closing ceremony of the program took place on March 30 at the Marriott Armenia Hotel, where the organizers, the

youth and community representatives summarized the achievements of 3 years.

The objective of the program was to give opportunities to young people with limited opportunities in the regions to become competitive in the labor market.

To that end in the first stage in 2018 a labor market and youth needs assessment survey was conducted, on the basis of which the directions of educational-information support were set up.

“We can assure that we have made a difference in the lives of these young people,” said Katarina Vardanyan, Head of the ARCS Youth, Volunteer and Membership Department, who coordinated the program during three years. “Our youth clubs will go on for the young people of Dilijan, Ijevan, Gavar and Sevan, as centers for discussing and implementing new ideas. We thank all our partners for supporting us and encouraging our youth over the years.”

Mentors worked with the members of the clubs, using innovative methods, 684 people participated in the online courses on "Professional Orientation and career", and the number of views was about 20,000. 2 camps for 60 participants were organized in the subject of “Promoting Entrepreneurship" as well as a Hackathon of Business ideas.

"If it were not for this program, I would not have had the opportunity to get the knowledge and get a job," said Sarmen, head of Ijevan Youth Club.

"I had a dream to have a youth club, to motivate young people. Thanks to the Red Cross, my dream came true," says Anahit, who runs the Sevan club.

The event was also attended by representatives of the communities and partner organizations, who in their speeches praised the effectiveness of the program for the youth of the communities, as the knowledge and skills they received were diverse, and the involvement of young people in community life has increased significantly.

Ծրագիրը կազմվել էր Դանիական Կարմիր խաչի կողմից. Հայկական, Վրացական և Բելառուսական Կարմիր խաչի ազգային ընկերությունների հետ համագործակցությամբ:

The program was developed by the Danish Red Cross in cooperation with Armenian, Georgian and Belarusian Red Cross national societies.

ՀԿԽԸ-ն արժանացավ «Տարվա լավագույն կամավորական նախաձեռնություն» մրցանակի

Մարտի 20-ին Հայկական Կարմիր խաչի ընկերությունը «Հայ կամավորների բանկ» ԵՀԿ-ի կողմից կազմակերպված «Տարվա լավագույն կամավոր 2020» մրցանակաբաշխության ժամանակ արժանացավ «Տարվա լավագույն կամավորական նախաձեռնություն» մրցանակին՝ Քովիդ-19 համավարակի ընթացքում իրականացրած կամավորական գործունեության համար:
ՀԿԽԸ Երիտասարդության, կամավորության և անդամակցության բաժնի վարիչ, հրավիրյալ խոսնակ Կատարինա Վարդանյանն իր խոսքում անդրադարձավ հանրության համար կամավորության դերին և համավարակի ընթացքում ՀԿԽԸ կամավորների կատարած ահռելի աշխատանքին:

Մրցանակաբաշխության նպատակն է խրախուսել տարբեր ոլորտներում կամավորական աշխատանք կատարած և հաջողություններ գրանցած անհատներին ու կազմակերպություններին՝ շեշտադրելով կամավորական աշխատանքի կարևորությունն ու անհրաժեշտությունը թե՛ անհատների, թե՛ երկրի զարգացման գործում: Այն կազմակերպվում է 2017 թվականից:

ARCS awarded "Best Volunteer Initiative of the Year 2020"

On March 20, the Armenian Red Cross Society was awarded the "Best Volunteer Initiative of the Year 2020" award for its volunteer work during the Covid-19 pandemic at the "Armenian Volunteer Bank" Youth NGO "Best volunteer 2020" award ceremony.
In her speech, Katarina Vardanyan, Head of the ARCS Youth, Volunteering, Membership Department, spoke about the role of volunteer work for the public and the tremendous work carried out by the ARCS volunteers during the pandemic.

The award aims to encourage individuals and organizations who have volunteered and succeeded in various fields, emphasizing the importance and necessity of volunteering in the development of both individuals and the country. It has been held since 2017.

ՀԿԽԸ Առաջին օգնության և Աղետներին արձագանքման թիմերը մասնակցեցին ԱԻՆ Հրշեջ-փրկարարների համար կազմակերպված ուսումնավարժանքին

Փլուզում, հրդեհ, ճանապարհատրանսպորտային պատահար. ՀայկականԿարմիրխաչիընկերության (ՀԿԽԸ) և Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի (ՌՀՄԱԿ) համագործակցության շրջանակներում ՀԿԽԸ Առաջին օգնությունն և աղետներին արձագանքման թիմերը մայիսի 26-ին մասնակցեցին ԱԻՆ Հրշեջ-փրկարարների համար կազմակերպված «Երկրաշարժի հետևանքով առաջացած լոկալ արտակարգ իրավիճակների հետևանքների վերացում» թեմայով ուսումնավարժանքին:

Վարժանքի նպատակն էր բարձրացնել Հրշեջ-փրկարարների պատրաստվածությունը, մշակել համատեղ փրկարարական աշխատանքների կազմակերպչական և գործնական հատվածները, ցուցադրել Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի հնարավորությունները:
Ուսումնավարժանքին հետևում էին ՌԴ Քաղաքաշտպանության, արտակարգ իրավիճակների և բնական աղետների հետևանքների վերացման նախարարի տեղակալ Նիկոլայ Գրեչուշկինը, ՀՀ ԱԻ նախարարի տեղակալ Արկադի Բալյանը, ՀԿԽԸ գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը, ՌՀՄԱԿ ղեկավարությունը:

ARCS First aid and Disaster Response teams participated in RA MES simulation drill for firefighters

Collapse, fire, traffic accident. Within the framework of cooperation between the Armenian Red Cross Society (ARCS) and the Russian-Armenian Humanitarian Response Center the

ARCS First Aid and Disaster Response Teams participated in the May 26 Earthquake Emergency Response Exercise.
The aim of the exercise was to increase the training of fire-rescuers, to work out the organizational and practical parts of the joint rescue work, to show the capabilities of the Russian-Armenian Humanitarian Response Center.
Nikolay Grechushkin, the Deputy Minister of Civil Defense, Emergency Situations and Natural Disasters of the Russian Federation, ArkadyBalyan, the Deputy Minister of Emergency Situations of the Republic of Armenia, Anna Yeghiazaryan, the Secretary General of the ARCS, and the leadership of the RAHRC were present at the training.

Առաջին օգնության արկղիկներ դպրոցներին և նախակրթարաններին

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը վերջին մարտ-մայիս ամիսների ընթացքում հանրապետության բոլոր մարզերի 1078 դպրոցների և 526 նախակրթական ուսումնական հաստատությունների, ինչպես նաև մշակութային կենտրոնների տրամադրել է թվով 1955 Առաջին օգնության արկղիկ: Նախատեսվում է առաջիկայում Առաջին օգնության արկղիկներով ապահովել նաև Երևանի դպրոցներն ու նախակրթարանները:

First aid boxes to schools and preschools of the country

In March - May the Armenian Red Cross Society has provided 1955 first aid kits to 526 pre-schools, cultural institutions and 1078 schools in all the regions of the country. It is planned to provide first aid kits to Yerevan schools and preschools in the near future.

Հայկական Կարմիր խաչի ընկերությունն "Առաջին օգնության հիմունքներ" թեմայով դասընթացներ անցկացրեց Սյունիքի մարզում

Հայկական Կարմիր խաչի ընկերությունն "Առաջին օգնության հիմունքներ" թեմայով դասընթացներ անցկացրեց Սյունիքի մարզի Ներքին Խնձորեսկ, Կոռնիձոր, Դավիթ Բեկ, Որոտան և Շուռնուխ գյուղերում: Դասընթացին մասնակցող գյուղերի բնակիչները, դպրոցի ուսուցիչները, աշակերտները սովորեցին առաջին օգնության քայլերը հրազենային վնասվածքների, ուժեղ արյունահոսության, կոտրված վերջույթների անշարժացման, սիրտ--թոքային վերակենդանացման, օձի կծածի և այլ արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև իրազեկվեցին հանկարծահաս իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու և հոգեբանական առաջին օգնության քայլերի վերաբերյալ:
Դասընթացի բոլոր մասնակիցները, ինչպես նաև գյուղերի բուժկետերն ստացան առաջին օգնության անհատական պայուսակներ և արկղիկներ:

Armenian Red Cross Society conducted trainings on "Basics of First Aid" in Syunik region

The Armenian Red Cross Society conducted trainings on "Basics of First Aid" in NerkinKhndzoresk, Kornidzor, Davit Bek, Vorotan and Shurnukh villages of Syunik region. Villagers, schoolteachers and students learned first aid steps for gunshot wounds, heavy bleeding, immobilizing fractured limbs, cardio-pulmonary resuscitation, snake bites and other emergencies, as well as psychological first aid steps in emergency situations.

All the participants of the training, as well as the medical centers of the villages, received individual first aid kits and bags.

Հայկական Կարմիր խաչի ընկերության արձագանքը Քովիդ -19 համավարակին

Իրականացվել է՝
- ռիսկի հաղորդակցություն և հանրային իրազեկում (ավելի քան 1 միլիոն անձ)
- պաշտպանիչ միջոցների տրամադրում (մոտ 1 միլիոն դիմակ, ալկոգել, սփրեյ, ԱՕ արկղիկներ)
- մարդասիրական աջակցություն՝ սնունդ և հիգիենիկ պարագաներ (մոտ 33,000 անձ)
- թեժ գծի միջոցով սոցիալ-հոգեբանական աջակցություն (ավելի քան 40,000 անձ)
- աջակցություն տնային տնտեսություններին (32 տնային տնտեսություն)
- էլեկտրաէներգիայի (735 անձ), կոմունալ վճարների (16,117 անձ) և բնակվարձերի փոխհատուցում (435 անձ)
- կրթական գործընթացի համար պլանշետների տրամադրում (500 երեխա):

Ընդհանուր առմամբ իրականացվել են 2,5 մլն դոլարի ծրագրեր:

ARCS Response to Covid-19 pandemic

The following have been carried out:
- Risk communication and public awareness (over 1 million people)
- Provision of protective items (about 1 million masks, alco-spray, FA boxes)
- Humanitarian aid: food and hygiene items (about 33,000 people)
- Psycho-Social support through the hotline (more than 40,000 people)
- Support to households (32 households) Reimbursement of electricity (735 persons), utility bills (16,117 persons), and rents (435 persons)
- Provision of tablets for the educational process (500 children).

Total cost of the implemented projects makes 2,5 million USD.

ՀԿԽԸ-ն դրամական աջակցություն է տրամադրում Ղարաբաղյան հակամարտության սրացման հետևանքով Հայաստան տեղափոխված անձանց

Ղարաբաղյան հակամարտության սրացման հետևանքով 2020թ. աշնանը Հայաստան տեղափոխված 14000 անձ Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից հուլիս ամսվա ընթացքում միանվագ կստանա 68000 ՀՀ դրամ (ընդհանուր՝ 952 միլիոն ՀՀ դրամ): Միանալով դրամական աջակցության ՀՀ Կառավարության ծրագրին Հայկական Կարմիր խաչի ընկերությունը նշված աջակցությունը հատկացնում է ՀՀ աշխատանքի և սոցիալա-կան հարցերի նախարարություն հետ համագործակցությամբ և ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակի ֆինանսավորմամբ:

ARCS provides cash assistance to the people displaced to Armenia as a result of Nagorno Karabakh conflict escalation

14 000 people who arrived in Armenia as a result of the escalation of the Nagorno-Karabakh conflict in the autumn of 2020 will receive AMD 68 000 one - time assistance from Armenian Red Cross Society (ARCS) in July (AMD 952 mln in total). Having joined the Government of the Republic of Armenia in realisation of the cash assistance program the Armenian Red Cross Society provides the mentioned assistance, in cooperation with the Ministry of Labor and Social Affairs and with the funding support from UNHCR Armenia.

Ծրագրում ընդգրկվելու համար տեղահանված անձինք գրանցվել են նախապես՝ համապատասխան հայտ լրացնելով ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Սոցիալական ապահովման ծառայության կայք էջում (www.dimum.ssa.am):
Միանալով ՀՀ Կառավարության կանխիկ աջակցության ծրագրերին՝ Հայկական Կարմիր խաչի ընկերությունը 2020 նոյեմբերից 2021 թվականի հուլիս ամիսն ընդհանուր առմամբ տրամադրել է 1 691 323 000 ՀՀ դրամ՝ աջակցելով 38 444 մարդու: Գումարն ուղղվել է տեղահանվածների հիմնական կարիքների մատչելիության ապահովմանը, նրանց և նրանց հյուրընկալող ընտանիքների աջակցությանը:

The displaced persons have registered in advance to be included in the cash assistance program by filling out a relevant application form on the website of the social service of the Ministry of Labor and Social Affairs of the Republic of Armenia (www.dimum.ssa.am).
Joining the cash assistance programs of the Government of the Republic of Armenia, during the period of October 2020-July 2021, ARCS has provided the total amount of AMD 1,691,323,000 to 38 444 persons displaced from Nagorno-Karabakh to Armenia. The financial assistance aimed to help the families to meet their basic needs and support their host families.

Այստեղ այնքան սեր ու ջերմություն կա. Արմո պապ

Մասիսի բարեգործական ճաշարանում շաբաթը երեք օր տաք ճաշ, հյութ, քաղցրավենիք է ստանում գրեթե 100 միայնակ տարեց:
Շվեյցարական Կարմիր խաչի աջակցությամբ՝ Հայկական Կարմիր խաչի ընկերությունն 2017թ. գործարկել է «Սնունդ ՀՀ 4 մարզերի համար» ծրագիրը՝ Լոռու, Շիրակի, Արարատի և Արմավիրի մարզերում՝ նպատակ ունենալով յուրաքանչյուր մարզում 80 միայնակ տարեցի ապահովել սննդի փաթեթով: Շահառուներն ընտրվել են հստակ որոշված կարիքների և մշակված չափանիշների հիման վրա: Գործընթացն իրականացվել է սերտորեն համագործակցելով տեղական ինքնակառավարման մարմինների, հատկապես՝ մարզպետարանների և քաղաքապետարանների սոցիալական հարցերի բաժինների հետ:

Արարատի Մասիս քաղաքում ծրագիրն իրագործվեց Բարեգործական ճաշարանի միջոցով:
73-ամյա Արմո պապիկը խիստ բծախնդիր է, ասում է՝ 2017թ. տիկնոջ մահից հետո ամեն բան ու ամեն մարդու պատրաստած չէ, որ հավանում ու համտեսում է: Բայց Կարմիր խաչի ուտելիքներն այնքան համով ու սննդարար են, որ այդ օրերը բաց չի թողնում: Անհամբերությամբ է սպասում այդ օրերին, ճաշարանում հասակակիցների հետ ջերմ սեղանի շուրջ շփումներին: Ճիշտ է, կորոնավիրուսային համավարակով պայմանավորված, այս օրերին ուտելիքը տուն են տանում: Ինքն էլ, մինչև Ղարաբաղյան հակամարտության սրացումը մենակ էր ապրում: Հիմա իրեն է միացել Հադրութից տեղափոխված որդու ընտանիքը: Երկու թոռների համար ևս ուտելիքը բավականացնում է:

-Եթե համով ու սննդարար չլիներ, հաստատ չէի գա: Եթե աշխատողները մաքուր ու բարեհամբույր չլինեին, չէի գա: Այնքան սեր ու ջերմություն կա այստեղ, որ միայն դրա համար արժե գալ, - ասում է Արմո պապիկը:

There is so much love and warmth here, grandpa Armo

Almost 100 elderly people receive hot meals, juice and sweets three days a week in Masis Soup Kitchen.
With the support of the Swiss Red Cross, the Armenian Red Cross Society launched the "Food for 4 regions of Armenia" program in 2017, in Lori, Shirak, Ararat and Armavir regions, aiming to provide 80 single elderly people in each region with food packages. Beneficiaries were selected based on clearly defined needs and criteria. The work was carried out in close cooperation with the local self-government bodies, especially with the social affairs departments of the regional administrations and municipalities.
In the city of Masis in Ararat region, the program was implemented through the Soup Kitchen.
73-year-old grandpa Armo is meticulous. He says after his wife's death in 2017 he doesn't like and doesn't try every food prepared by everyone. But the meals of the Armenain Red Cross are so tasty and nutritious that he does not miss those days. He, in fact, looks forward to those days, to the interactions around a friendly table with peers in the Kitchen. Given the Covid-19 pandemic restrictions he takes the food home. He himself used to live alone before the escalation of Nagorno Karabakh conflict. Now the family of his son, who moved from Hadrut, has joined him. This food is sufficient for the two grandchildren as well. “If the meals were not tasty and nutritious, I definitely wouldn't come here. I would not come if the staff were not clean and friendly. There is so much love and warmth here that it is worth coming just for that,” Grandpa Armo says.